Արձակ, Վիպակ, Ֆրանսիական գրականություն

Թարգմանությունը՝ Վահե Միքայելյանի

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ

ԱՆՀԱՅՏ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ

Մի լորդի

. . . . . .

. . . . . .

. . . . . .

1

ԺԻԼԼԵՏ

1612 թվականի վերջերին, դեկտեմբերյան մի ցուրտ առավոտ, արտաքուստ խիստ բարակ վերնազգեստ հագած մի երիտասարդ զբոսնում էր Փարիզի Մեծ-Ավգուստինյանների փողոցում գտնվող մի տան դռան առջև:

Բավական երկար ժամանակ այդ փողոցում երթևեկում էր նա այն սիրահարի անվճռականությամբ, որը չի համարձակվում ներկայանալ իր առաջին սիրուհուն՝ ինչքան էլ նա դյուրամատչելի լինի: Վերջապես նա անցավ դռան շեմքը և հարցրեց, թե վարպետ Ֆրանսուա **Պորբյուսը**[1] տա՞նն է: Մի պառավ կին, որ զբաղված էր ստորին սրահն ավլելով, հաստատական պատասխան տվեց, և երիտասարդը դանդաղորեն բարձրացավ աստիճանները՝ կանգ առնելով յուրաքանչյուրի վրա, նման որևէ նորընտիր պալատականի, որ մտահոգված է, թե թագավորի մոտ ինչպիսի՛ ընդունելություն կգտնի: Երբ նա հասավ ոլորուն սանդուղքի ծայրը, մի րոպե մնաց հարթակի վրա, վարանելով, թե վերցնի՞ կոպիտ թակոցը, որ զարդարում էր այն արվեստանոցի դուռը, ուր անկասկած աշխատում էր Հենրի IV-ի նկարիչը, որին լքել էր Մարի դը Մեդիչին՝ հանուն Ռուբենսի:

Երիտասարդն ապրում էր այն խոր զգացումը, որ հավանաբար թրթռացրել է բոլոր մեծ արվեստագետների սրտերը, երբ նրանք իրենց երիտասարդության ու արվեստասիրության ամենաբուռն օրերին մոտեցել են որևէ հանճարեղ մարդու կամ գլուխգործոցի:

Մարդկային բոլոր զգացումների մեջ էլ կա մի կուսական թարմություն, ազնիվ խանդավառություն, մի պարզ ծաղիկ, որը հետզհետե թառամում է, մինչև որ երջանկությունը դառնա լոկ հուշ, իսկ փառքը՝ խաբկանք: Այդ դյուրաբեկ հույզերից ոչ մեկը այնքան նման չէ սիրո, որքան դեռաբույս կիրքն այն արվեստագետի, որ թևակոխում է իր փառքի դժբախտության ճակատագրի երանավետ չարչարանքի շրջանը, մի կիրք, որ լի է համարձակությամբ և երկչոտությամբ, տարտամ հավատով և անխուսափելի վհատություններով:

Նա, ում քսակը թեթև է, հանճարը նորաբույս, և որևէ վարպետի ներկայանալիս ուժեղ բաբախում չի ունեցել, նրան միշտ էլ կպակասի սրտում մի լար, վրձինի մի անծանոթ հարված, ստեղծագործության մեջ՝ զգացում, պոեզիայի ինչ-որ հատուկ երանգ: Եթե իրենք իրենց վրա փքված մի քանի սնապարծներ շատ շուտ են հավատում ապագային, ապա նրանք խելացի մարդիկ են լոկ հիմարների համար: Այս տեսակետից երիտասարդ անծանոթը թվում էր, թե իրական արժանիք

ունի, եթե իհարկե տաղանդը չափվելու է առաջին երկչոտությամբ, այն անպատում համեստությամբ, որը կորցնում են փառքին նվիրված երիտասարդներն իրենց արվեստի վարժության ընթացքում, ինչպես սիրուն կանայք են կորցնում իրենց ամոթխածությունը կոկետության վարժությունների մեջ: Հաջողության սովորելը նվազեցնում է կասկածանքը, իսկ ամոթխածությունը գուցե՛ կասկածանք է:

Աղքատությունից ճնշված և այդ րոպեին իր հանձնապաստանությունից զարմացած խեղճ նորընծան չէր մտնի այն նկարչի մոտ, որին մենք պարտական ենք Հենրի IV-ի սքանչելի նկարը, եթե չլիներ պատահականության ուղարկած արտակարգ օգնությունը: Մի ծերունի բարձրացավ սանդուղքը: Նրա արտառոց զգեստներից, ժանյակազարդ օձիքի փարթամությունից և քայլվածքի գերիշխող վստահությունից երիտասարդը գուշակեց, որ այդ անձնավորությունը նկարչի կա՛մ հովանավորն է, կա՛մ բարեկամը: Հարթակի վրա նա ետ քաշվեց՝ ծերունուն տեղ տալու համար ու հետաքրքրասիրաբար զննեց նրան, հուսալով գտնել նրա մեջ արվեստագետի լավ խառնվածք, կամ այն սիրալիրությունը, որ հատուկ է արվեստներ սիրող մարդկանց: Սակայն նա մի տեսակ դիվական, մանավանդ արվեստագետներին հրապուրող մի **անբացատրելի բան** նկատեց այդ դեմքի վրա: Պատկերացրեք մի ճաղատ, գնդաձև, դուրս ցցված ճակատ, որ խորդուբորդ իջնում էր լայնանիստ ու ծայրը տնկված քթի վրա, ինչպես էր Ռաբլեի կամ Սոկրատի քիթը, ժպտուն ու խորշոմած բերան, կարճ ու հպարտորեն վեր բարձրացող կզակ՝ սրածայր ձևված ալեխառն մորուքով, տարիքի համեմատ անփայլ ու ծովականաչ աչքեր, որոնք սակայն հակադրվելով սադափագույն ճերմկուցին, որի մեջ ծփում էր բիբը, զայրույթի կամ խանդավառության պահերին, ընդունակ էին երբեմն մագնիսական հայացքներ արձակել: Բացի դրանից դեմքը բացառիկ կերպով թորշոմել էր տարիքից, ևս առավել այն մտածմունքներից, որոնք հավասարապես կրծում են և՛ հոգին, և՛ մարմինը: Աչքերն այլևս թարթիչ չունեին, իսկ նրանց ցցուն կամարների վրա հոնքերի հազիվ մի քանի մազեր էին երևում: Դրեք այս գլուխը մի նրբակազմ ու անզոր մարմնի վրա, շրջապատեցեք նրա վիզը սպիտակությունից շողշողացող և նրբորեն հյուսված ժանյակով, մի ծանրակուռ ոսկե շղթա զցեցեք ծերունու վերնազգեստի վրա, և կունենաք անկատար պատկերն այդ անձնավորության, որին սանդուղքի աղոտ լույսը մի ֆանտաստիկ երանգ էր հաղորդում: Դուք կկարծեիք, որ Ռեմբրանդտի նկարներից մեկը, շրջանակից դուրս եկած, լռիկ քայլում է այդ մեծ նկարչին հատուկ մուգ մթնոլորտում: Ծերունին մի խորաթափանց հայացք նետեց երիտասարդի վրա, երեք անգամ բախեց դուռը և բաց անող հիվանդոտ, մոտ քառասնամյա մարդուն ասաց.

— Բարև՛, վարպետ:

Պորբյուսը հարգալիր գլուխ տվեց, թողեց երիտասարդին ներս մտնի՝ կարծելով, թե ծերունին է բերել և առավել ևս քիչ մտածեց նրա մասին, մանավանդ, որ նորադարձն ընկավ այն հմայքի տակ, որ պետք է զգան բնածին նկարիչները հենց առաջին արվեստանոցում, ուր նրանք տեսնում են արվեստի վարպետության մի քանի գաղտնիքներ: Առաստաղի մեջ շինված ապակեծածկ մի պատուհան լուսավորում էր վարպետ Պորբյուսի արվեստանոցը: Լույսը կենտրոնացած լինելով նկարահաստոցին կառչած մի կտավի վրա, որին երեք-չորս սպիտակ գծեր էին միայն քսված, չէր հասնում այդ ընդարձակ սենյակի անկյունների մութ խորքերին: Սակայն մի քանի մոլորված ցոլքեր այդ շիկագույն ստվերի մեջ լուսավորում էին պատից կախված ասպետական զրահների դուրս ցցված, արծաթազօծ մասը, լույսի մի հատու շերտ գծում թանկարժեք ամանեղենով բեռնավորված հնամենի բուֆետի քանդակված ու ներկված քիվի վրա, կամ պայծառ բծեր սփռում այդտեղ իբր մոռել զցված, մեծ ծալքեր ունեցող ոսկեգույն դիպակե հին վարագույրների վրա: Գաջե կաղապարներ, դարերի համբույրներից տարփանքով հղկված հնադարյան աստվածուհիների բեկորներ և իրաններ ծանրաբեռնել էին դարակներն ու սեղանները: Անհամար ուրվանկարներ, երեք գույնի մատիտներով, օքրայամատիտով կամ գրչով արված էտյուդներ ծածկում էին պատերը՝

մինչև առաստաղը: Ներկերի տուփերը, ձեթի ու էսենցիայի շշերը և շրջված աթոռակները մի նեղ ճանապարհ էին թողնում հասնելու համար այն լուսապսակին, որ ձգում էր բարձրադիր, երփներանգ ապակիներով պատուհանը, և որի ճառագայթներն ուղղակի ընկնում էին Պորբյուսի դժգույն դեմքի և այդ տարօրինակ մարդու փղոսկրե գանգի վրա: Երիտասարդի ուշադրությունը շուտով սևեռվեց բացառապես մի նկարի, որը ռևոլյուցիաների ու իրարանցումների այդ ժամանակաշրջանում արդեն նշանավոր էր դարձել և որին այցելության էին գալիս այն համառներից մի քանիսը, որոնց պարտական ենք սրբազան հուրի պահպանումը՝ դժբախտ օրերին: Այդ գեղեցիկ նկարը ներկայացնում էր **Եգիպտուհի Մարիամին**, որը պատրաստվում էր վճարել նավակի անցագինը: Մարի դը Մեդիչիի համար պատրաստած այս գլուխգործոցը թագուհին ծախել էր իր թշվառության օրերին:

— Քո սրբուհին ինձ դուր է գալիս,— ասաց ծերունին Պորբյուսին,— և ես դրա համար տասը ոսկի ավելի կտամ թագուհու տված գնից, բայց մրցակցե՞լ նրա հետ... երբե՛ք:

— Ձեզ դո՞ւր է գալիս այդ:

— Հե՛, հե՛,— գոչեց ծերունին,— դո՞ւր է գալիս... այո և ոչ: Քո ստեղծած կինը բարեկազմ է, բայց նա չի ապրում: Դուք, նկարիչներդ, կարծո՞ւմ եք, թե ամեն բան արել եք, երբ ճշտորեն նկարել եք որևէ մարդկային ֆիգուր ու ամեն բան դրել իր տեղը՝ ըստ անատոմիայի օրենքների: Դուք այդ ուրվագիծը ներկում եք նախօրոք ձեր ներկատախտակի վրա պատրաստած մարմնագույնով՝ հոգ տանելով, որ մի կողմն ավելի ստվերոտ լինի մյուսից, և որովհետև մերթ-մերթ դիտում եք սեղանի վրա կանգնած որևէ մերկ կնոջ՝ կարծում եք, թե ընդօրինակում եք բնությունը, երևակայում եք, թե նկարիչներ եք և կորզել եք աստծու գաղտնիքը... Պը՛ռռռ: Մեծ բանաստեղծ լինելու համար բավական չէ՛ շարահյուսությունը լավ իմանալ և լեզվական սխալներ չանել: Նայի՛ր սրբուհուդ, Պորբյո՛ւս: Առաջին հայացքից կարծես նա հիանալի է, բայց երկրորդ հայացքին նկատվում է, որ փակցված է կտավի ֆոնին և հնարավոր չէ պտտվել նրա շուրջը: Սա մի սիլուետ է, որ լոկ մի երես ունի, սա մի հատված կերպարանք է, մի պատկեր, որ չի կարող շուռ գալ, դիրքը փոխել: Այդ բազուկի ու նկարի ֆոնի միջև օդ չեմ զգում, պակասում է տարածությունն ու խորությունը. սակայն հեռանկարում ամեն բան լավ է, և օդի նվազումը ճշտիվ պահպանված է: Սակայն հակառակ այսքան գովելի ջանքերի, ես չեմ կարող հավատալ, որ այդ գեղանի մարմինը շնչավորված է կյանքի տաքուկ շնչով: Ինձ թվում է, թե չեմ կարող ձեռքս դնել այդքան ցցուն կլորություն ունեցող լանջի վրա. ես այն կգտնեմ մարմարի պես սառն: Ո՛չ, բարեկամ, արյուն չի հոսում այդ փղոսկրե մորթի տակ, կյանքը իր բոսորագույն ցողով չի ուռեցնում նրա երակներն ու նյարդիկները, որոնք ցանցանման խաչաձևվում են քունքերի ու կրծքի սաթանման թափանցիկության տակ: Այս մեկ կետը թրթռում է, բայց այն մյուսն անշարժ է, կյանքն ու մահը պայքարում են ամեն մի մանրամասնի մեջ — այստեղ մի կին է, այնտեղ՝ մի արձան, ավելի այն կողմը՝ մի դիակ: Քո ստեղծագործությունն անկատար է: Դու կարողացել ես քո հոգու միայն մի մասը ներշնչել քո սիրեցյալ գործի մեջ: Պրոմեթեոսի ջահը ավելի քան մի անգամ հանգել է քո ձեռքում, և քո նկարի բազմաթիվ տեղերին չի դիպել երկնային բոցը:

— Իսկ ինչո՞ւ, սիրելի՛ վարպետ,— հարգանքով ասաց Պորբյուսը ծերունուն, մինչդեռ երիտասարդը մեծ դժվարությամբ էր կարողանում զսպել անծանոթ ծերունուն ծեծելու ուժեղ ցանկությունը:

— Ահա թե ինչո՛ւ,— պատասխանեց փոքրիկ ծերունին:— Դու անվճռականորեն տատանվել ես երկու սիստեմի՝ գծանկարի ու գունանկարի միջև, գերմանական հին վարպետների մանրակրկիտ հանդարտության ու ճշգրիտ պրկության, և իտալական նկարիչների շլացուցիչ աշխուժության ու անվրդով հորդառատության միջև: Դու կամեցել ես նմանվել միաժամանակ Հանս Հոլբայնին և

Տիցիանին, Ալբրեխտ Դյուրերին և Պոլ Վերոնեզին: Դա անկասկած հիանալի փառասիրություն է: Եվ ի՞նչ է ստացվել: Դու չես կարողացել ձեռք բերել ո՛չ չորության խստամբեր հմայքը, ո՛չ էլ լուսաստվերի խաբուսիկ կախարդանքը: Ահա այստեղ, ինչպես հալած բրոնզն է ճաքեցնում իր խիստ թույլ կաղապարը, Տիցիանի հարուստ և խարտյաշ ներկը ճեղքել է Ալբրեխտ Դյուրերի վտիտ շրջագիծը, որի մեջ դու այն ձուլել ես: Մի այլ տեղ ուրվագիծը դիմացել է ու ընդունել վենետիկյան ներկատախտակի սքանչելի հորդումները: Քո սրբուհին ո՛չ կատարելապես գծագրված է, ո՛չ էլ կատարելապես նկարված, և ամենուրեք կրում է այդ չարաբաստիկ անվճռականության հետքերը: Եթե ինքդ քեզ բավականաչափ ուժեղ չէիր զգում այդ երկու ախոյան ոճերն ի մի ձուլելու քո հանճարի կրակով, ապա անկեղծորեն պետք է ընտրեիր երկուսից մեկը՝ ձեռք բերելու համար այն միասնությունը, որ կյանքի պայմաններից մեկն է: Քո մեջտեղի մասերն են միայն ճիշտ, շրջագծերը կեղծ են, չեն ամփոփվում և նրանց հետևում ոչինչ չես սպասում: Այստեղ ճշմարտություն կա,— ասաց ծերունին ցույց տալով սրբուհու կուրծքը:— Այստեղ էլ,— շարունակեց նա ցույց տալով այն կետը, ուր նկարի վրա վերջանում էր ուսը:— Իսկ այստեղ,— ասաց նա վերադառնալով լանջի կենտրոնը,— ամեն ինչ կեղծ է: Ավելի չվերլուծենք, թե չէ դու կարող ես հուսահատվել: Ծերունին նստեց նստարանի վրա, գլուխն առավ ձեռքերի մեջ ու մնաց լուռ:

— Վարպե՛տ,— դիմեց նրան Պորբյուսը,— այնուամենայնիվ ես լավ ուսումնասիրել եմ այդ լանջը մերկ մարմնի վրա: Բայց մեր դժբախտությունից, բնության մեջ կան այնպիսի իսկական էֆեկտներ, որոնք ամենևին հնարավոր չեն կտավի վրա...

— Արվեստի խնդիրը բնությունն ընդօրինակելը չէ, այլ այն արտահայտելը: Դու չնչին ընդօրինակող չես, այլ բանաստե՛ղծ,— գոչեց աշխուժությամբ ծերունին՝ բռնակալական մի ժեստով ընդհատելով Պորբյուսին:— Այլապես որևէ քանդակագործ իր աշխատանքը կատարած կլիներ մի կնոջ գաջե կաղապարը հանելով: Հապա՛, փորձիր հանել սիրուհուդ ձեռքի կաղապարը և դիր առջևդ. դու կնկատես, որ դա մի զարհուրելի դիակ է առանց որևէ նմանության, և դու ստիպված կլինես գնալ գտնելու այն արվեստագետին, որն առանց այդ ձեռքը ճշգրտորեն ընդօրինակելու՝ քեզ կպատկերի նրա շարժումն ու կյանքը: Մենք պետք է բռնենք իրերի ու էակների ոգին, հոգին ու կերպարանքը: Էֆեկտնե՛ր, էֆեկտնե՛ր, բայց չէ՞ որ դրանք կյանքի դեպքերն են, և ոչ թե կյանքը: Ձեռքը — քանի որ ես այդ օրինակը վերցրի ոչ միայն առնչվում է մարմնին, այլ նաև արտահայտում ու շարունակում է մի միտք, որը պետք է բռնել և վերարտադրել: Ո՛չ նկարիչը, ո՛չ բանաստեղծը, ո՛չ քանդակագործը չպետք է էֆեկտը բաժանեն պատճառից, որովհետև դրանք անբաժանելի են, մեկը մյուսի մեջ են: Իսկական պայքարն այստեղ է: Շատ նկարիչներ հաղթում են բնազդաբար՝ առանց ճանաչելու արվեստի այս խնդիրը: Դուք գծանկարում եք մի կին, բայց նրան չե՛ք տեսնում: Այդ միջոցով չէ, որ հասնում են բնության գաղտնիքը հաղթահարելուն: Ձեր ձեռքը վերարտադրում է այն մոդելը, որ դուք ընդօրինակել եք ձեր վարպետի մոտ, երբ դուք բնավ էլ չեք մտածում այդպես անել: Դուք բավականաչափ չեք թափանցում ձևի ներսը, բավականաչափ սիրով ու հարատևությամբ չեք հետապնդում նրան՝ նրա շրջադարձերի ու փախուստների ժամանակ: Գեղեցկությունն այնպիսի խիստ ու դժվարահաճ բան է, որ երբեք չի թողնում այդպես սպասեն իրեն, պետք է սպասել բարեպատեհ ժամի, դարանակալ հետևել, շտապեցնել, սերտորեն փաթաթվել նրան, հարկադրելու համար, որ անձնատուր լինի: Դիցաբանության Պրոտեոսից ավելի անբռնելի և ավելի բազմաձալ Պրոտեոս է Ձևը, և երկարատև մարտերից հետո միայն կարողանում են հարկադրել նրան, որ երևա իր իսկական տեսքով: Իսկ դուք, նկարիչներդ, բավականանում եք նրա ընձեռած առաջին, կամ շատ-շատ երկրորդ, երրորդ տեսքով. այդպես չեն վարվում հաղթական մարտիկները: Այդ անպարտ նկարիչները չեն խաբվում նրա բոլոր խուսափանքներից, այլ հարատևում են, մինչև որ բնությունն ստիպված լինի բոլորովին մերկ և իր իսկական ոգով երևալու: Այսպես է վարվել Ռաֆայելը,— ասաց ծերունին հանելով իր սև թավշե գլխարկը՝ արտահայտելու համար այն

հարգանքը, որ ներշնչում էր իրեն արվեստի արքան,— նրա մեծ գերազանցությունն առաջանում է ներքին զգացումից, որը, նրա մոտ, կարծես ուզում է փշրել Ձևը: Ձևը նրա մարդկային պատկերների մեջ այն է, ինչ է և մեզ համար, այսինքն՝ գաղափարների, զգայությունների և մի ընդարձակ պոեզիայի արտահայտության միջնորդ: Յուրաքանչյուր մարդկային ֆիգուրը մի աշխարհ է, մի դիմանկար, որի մոդելը երևացել է վսեմ տեսիլքի միջոցին, գունավորված է լույսով, նշված է մի ներքին ձայնով, մերկացված է մի երկնային մատով, որը ողջ կյանքի անցյալում ցույց է տվել արտահայտության աղբյուրները: Ձեր կանանց դուք մսեղեն գեղեցիկ զգեստներ և մազե սքանչելի հանդերձներ եք հագցնում, իսկ ո՞ւր է այն արյունը, որ ծնունդ է տալիս հանդարտության կամ կրքի, որ առանձնահատուկ տպավորություն է գործում: Քո սրբուհին մի թուխ կին է, բայց այս գույները, իմ խե՛ղճ Պորբյուս, խարտյաշի համար են: Ձեր կերպարանքներն ուրեմն ներկված գունատ ուրվականներ են, որոնց անց եք կացնում մեր աչքերի առջև և անվանում նկարչություն ու արվեստ: Եվ որովհետև դուք նկարել եք մի բան, որ ավելի նման է կնոջ, քան թե տան, ապա կարծում եք, թե հասել եք նպատակին, և միանգամայն հպարտ, որ առաջին նկարիչների պես այլևս ստիպված չեք ձեր նկարած ֆիգուրների կողքին գրելու currus venustus* կամ pulcher homo**, ապա երևակայում եք, թե հրաշալի արվեստագետներ եք: Հե՛յ, հե՛յ, դեռ չեք հասել դրան, իմ սիրելի ընկերներ, դեռ շատ մատիտներ պետք է մաշեք, շատ կտավներ ներկեք մինչև հասնելը: Անշուշտ որևէ կին գլուխն այս ձևով պահում է, շրջազգեստն այսպես բռնում է, նրա աչքերը նվաղում են ու հալչում այսպիսի մեղմ հեզության արտահայտությամբ, նրա թարթիչների թրթռուն ստվերն այսպես խաղում է նրա այտերի վրա: Այդպե՛ս է, և այդպես չէ՛: Ի՞նչ է պակասում դրան. մի չնչին բան, բայց այդ չնչինն ամեն ինչ է: Դուք պատկերել եք կյանքի նմանությունը, բայց չեք արտահայտում նրա լիությունը, որից հորդում է այն անբացատրելի բանը, որ գուցե հոգին է, և որ մշուշի նման ծփում է ծածկույթի վրա, մի խոսքով կյանքի այն ծաղիկը, որ Ռաֆայելն ու Տիցիանն են կարողացել բռնել: Ելնելով այն վերջնագույն կետից, որին դուք կհասնեք, գուցե սքանչելի նկարչություն ստեղծվի. բայց դուք շուտ եք հոգնում: Սովորական մարդը հիանում է. իսկ իսկական ճանաչողը՝ ժպտում: Ո՛վ Մաբյուզե[2], ո՛վ իմ վարպետ,— ավելացրեց այդ արտասովոր անձնավորությունը,— դու գո՛ղ ես, կյանքը դու տարար քեզ հետ:

— Այնուամենայնիվ,— շարունակեց նա,— այս կտավն ավելի արժեքավոր է, քան այն անպիտան Ռուբենսի նկարները կարմրադեղ ցանված իրենց ֆլամանդական մսերի լեռներով, շեկ մազերի հեղեղով և գույների ժխորով: Համենայն դեպս, դուք այդտեղ ունեք գույն, զգացում ու գծագրություն՝ Արվեստի երեք էական մասերը:

— Բայց այս սրբուհին հոյակապ է, պարո՛ն,— գոչեց երիտասարդն ուժեղ ձայնով՝ դուրս գալով խոր երազանքից։— Այս երկու դեմքերի՝ սրբուհու ու նավավարի դեմքերի վրա զգացվում է հղացման նրբություն, որ անծանոթ է իտալացի նկարիչներին, և ես չեմ ճանաչում թեկուզ մեկին, որ հնարած լիներ նավավարի անվճռականությունը:

— Այս տղան ձե՞րն է,— հարցրեց Պորբյուսը ծերունուն:

— Ավա՛ղ, վարպե՛տ, ներեցեք իմ հանդգնությանը,— պատասխանեց նորադարձը կարմրելով։— Ես անհայտ եմ, բնազդաբար խզբզում եմ և վաղուց չէ, ինչ եկել եմ այս քաղաքը՝ ամենայն գիտությանց աղբյուրը:

— Գործի անցեք,— ասաց նրան Պորբյուսը՝ մի կարմիր մատիտ ու մի թերթ թուղթ տալով նրան:

---

* Գեղեցիկ երկանիվ (հին աշխարհի ռազմակառք), (լատ.):
** Գեղեցիկ տղամարդ (լատ.):

Անծանոթն արագ ընդօրինակեց Մարիամը՝ շտրիխներով:

— Օ՜, օ՜,— գոչեց ծերունին:— Ձեր անո՞ւնը:

Երիտասարդը ներքևում գրեց Նիկոլա Պուսեն[3]:

— Ահա մի գործ, որ վատ չէ սկսնակի համար,— ասաց այնքան խելահեղորեն ճառող արտասովոր անձնավորությունը:— Տեսնում եմ, որ կարելի է քո առջև նկարչության մասին խոսել: Ես քեզ չեմ կշտամբում, որ հիանում ես Պորբյուսի սրբուհու վրա: Դա մի գլուխգործոց է ամենքի համար, և արվեստի ամենախոր գաղտնիքներին ծանոթ հմուտները միայն կարող են բացահայտել դրա թերությունները: Բայց քանի որ դու արժանի ես դասի և ընդունակ այն հասկանալու, ապա ես քեզ ցույց կտամ, թե ինչքան քիչ բան է պետք այս գործը կատարյալ դարձնելու համար: Ամբողջովին դարձի՛ր աչք և ուշադրություն, ուսանելու նման առիթ գուցե բնավ չներկայանա քեզ: Ներկատախտակդ, Պորբյո՛ւս:

Պորբյուսը գնաց ներկատախտակ ու վրձիններ բերելու: Փոքրիկ ծերունին ջղագրգիռ շարժումով վեր քաշեց թևերը և բթամատը մտցրեց Պորբյուսի մեկնած երփներանգ գույներով ծածկված ներկատախտակի մեջ, ապա ավելի շուտ խլեց նրա ձեռքից, քան թե վերցրեց մի բուռ, ամեն չափի վրձիններ, իսկ նրա սրածայր մորուքը հանկարծ սկսեց շարժվել և այն սպառնալի ջանքերից, որոնք արտահայտում էին կրքոտ ֆանտազիայի եռը: Վրձինը ներկի մեջ թաթախելու հետ միասին նա մռլտում էր ատամների միջից.

— Ահա գույներ, որոնք արժանի են լուսամուտից դուրս շպրտվելու՝ դրանք բաղադրողի հետ միասին. սրանք վրդովեցուցիչ կերպով խիստ են ու կեղծ, ինչպե՞ս կարելի է այդ գույներով նկարել: Ապա տենդոտ աշխուժությամբ վրձինի ծայրը թաթախում էր տարբեր գույների կույտի մեջ, որոնց ողջ գամմայի վրայով վազում էր երբեմն ավելի արագ, քան մայր եկեղեցու երգեհոնահարն է վազում իր ստեղնաշարի վրայով զատկին O filii-ն* նվագելիս:

Պորբյուսն ու Պուսենը կանգնել էին նկարի երկու կողմը՝ անշարժ ու ամենաբուռն հայեցման մեջ խորասուզված.

— Տեսնո՞ւմ ես, երիտասա՛րդ,— ասում էր ծերունին առանց ետ դառնալու,— տեսնո՞ւմ ես, թե ինչպես երեք-չորս վրձնահարվածի և մի փոքր կապտավուն գլասիի միջոցով կարելի էր օդի շրջանառություն առաջացնել այս խեղճ սրբուհու գլխի շուրջը, որը պիտի շնչահեղձ լիներ այդ թանձր մթնոլորտի մեջ: Տե՛ս, թե ինչպե՛ս այս հանդերձանքն այժմ ծփում է, և թե ինչպե՛ս զգացվում է, որ զեփյուռն այն բարձրացնում է: Մինչ այդ նա նման էր գնդասեղներով պրկված ու ամրացված կտավի: Նկատո՞ւմ ես, թե ինչպես սնդուսե այն փայլը, որ տվի կրծքին, վերարտադրում է դեռատի աղջկա մորթի թավշյա ճկունությունը, և ինչպե՛ս գորշակամարի և կիզված օքրայի խառնուրդը տաքացնում է այս մեծ ստվերի մոխրագույն սառնությունը, ուր արյունը փոխանակ հոսելու՝ սառել էր: Երիտասա՛րդ, երիտասա՛րդ, այն, ինչ քեզ ցույց եմ տալիս այստեղ, ո՛չ մի վարպետ չպիտի կարողանա սովորեցնել քեզ: Միայն Մաբյուզեն ծանոթ էր կերպարանքներին կյանք տալու գաղտնիքին: Մաբյուզեն սոսկ մի աշակերտ է ունեցել. դա ես եմ: Ես աշակերտ չեմ ունեցել, և այժմ ծեր եմ: Դու բավականաչափ ուշիմ ես մնացածը կռահելու, մնացածը, որ ես նշմարել եմ տալիս:

Խոսելով հանդերձ՝ տարօրինակ ծերունին շտկում էր նկարի բոլոր մասերը, այստեղ վրձինի երկու հարված, այնտեղ միայն մեկ, բայց միշտ էլ այնքան դիպուկ, որ կասեիր, թե մի նոր նկար է, լույսով ողողված նկար: Նա աշխատում էր այնպիսի կրքոտ եռանդով, որ քրտինքը մարգարտանման

* Ջատկական շարական, «Ով որդյակք իմ» (լատ.):

ծածկեց նրա լերկ ճակատը: Նա այնքան արագ էր ընթանում և այնքան անհամբեր, այնքան ընդհատ-ընդհատ փոքր շարժումներով, որ երիտասարդ Պուսենին թվում էր, թե այդ արտառոց անձնավորության մարմնի մեջ կա մի դև, որը գործում է սրա ձեռքերով՝ ֆանտաստիկորեն վարելով դրանք՝ հակառակ այդ մարդու կամքին: Աչքերի գերբնական փայլը, գալարումները, որ կարծես դիմադրության հետևանք էին, այս մտքին տալիս էին ճշմարտության պատրանք, որն անշուշտ ներգործելու էր երիտասարդի երևակայության վրա: Ծերունին շարունակում էր աշխատել և ասում էր.

— Պա՜հ, պա՜հ, պա՜հ, ահա թե ինչպե՜ս է սա ներկվում, երիտասա՛րդ, եկե՛ք, ի՛մ վրձիններ, կենդանացրե՛ք տեսնեմ այս սառցանման երանգը: Դե շո՛ւտ: Այսպես, այսպես,— ասում էր նա աշխուժացնելով այն մասերը, ուր կյանքի պակաս էր նշել, ներկի մի քանի հպումներով անհետացնելով մարմնի գծերի անդաշնություններն ու վերականգնելով երանգի միասնությունը, որը համապատասխան էր հրաբորբոք եգիպտուհուն:

— Տեսնո՞ւմ ես, սիրելիս, վրձինի միայն վերջին հարվածն է վճռում: Պորբյուսը դրանցից հարյուրն է տվել, ես միայն մեկն եմ տալիս: Ո՛չ ոք մեզ երախտապարտ չի լինի ներքևում եղածի համար: Լա՛վ իմացիր սա: Վերջապես այդ դևը կանգ առավ և դառնալով դեպի հիացմունքից համրացած Պորբյուսն ու Պուսենը՝ ասաց.

— Սա դեռ չի հավասարվում իմ **Գեղանի Նուազյոզին**, բայց կարելի է անունը դնել մի այսպիսի գործի տակ: Այո՛, ես կստորագրեի սա,— ավելացրեց նա ու վեր կացավ վերցնելու համար մի հայելի, որի մեջ դիտեց նկարը:

— Իսկ հիմա գնանք նախաճաշելու,— ասաց նա:— Երկուսդ էլ կգաք տունս: Ունեմ ծխեփ խոզապուխտ ու լավ գինի: Հե՛յ, հե՛յ, հակառակ վատ ժամանակներին, կխոսենք նկարչության մասին: Մենք դեռ որևէ արժեք ունենք: Ահա մի երիտասարդ,— ավելացրեց նա խփելով Նիկոլա Պուսենի ուսին,— որ ընդունակ է:

Այդ ժամանակ նկատելով նորմանդացու խղճուկ վերարկուն, իր գոտուց մի կաշե քսակ հանեց, ձեռքը կոխեց մեջը և երկու ոսկի վերցնելով՝ մեկնեց նրան:

— Գնում եմ քո գծանկարը,— ասաց նա:

— Վերցրո՛ւ, ասաց Պորբյուսը Պուսենին, տեսնելով, որ նա ամոթից ցնցվում ու կարմրում է, որովհետև այդ երիտասարդ նկարիչն աղքատի հպարտություն ուներ:— Դե վերցրո՛ւ, նա իր քսակում երկու թագավորի փրկագին ունի:

Երեքն էլ իջան արվեստանոցից, և ճանապարհին զրուցելով արվեստների մասին, հասան Սեն-Միշել կամրջի մոտ գտնվող մի գեղեցիկ փայտե տուն, որի զարդաքանդակները, բռնակը, լուսամուտների շրջանակներն ու արաբեսկները հիացրին Պուսենին: Ապագա նկարիչը հանկարծ ընկավ ներքնահարկի մի սրահ, թեժ կրակի առջև, ախորժելի ուտելիքներով բեռնված սեղանի մոտ, և անլուր բարեբախտության բերմամբ՝ բարեմտությամբ լի, երկու մեծ արվեստագետների ընկերության մեջ:

— Երիտասա՛րդ, — ասաց նրան Պորբյուսը՝ տեսնելով, որ նա ապշած կանգնել է մի նկարի առջև,— շատ մի՛ նայեք այդ նկարին, հուսահատության մեջ կընկնեք:

Դա այն **Ադամն** էր, որ նկարեց Մաբյուզեն՝ դուրս գալու համար բանտից, ուր այնքան երկար պահել տվին նրան նրա պարտատերերը: Այդ կերպարանքն իսկապես ներկայացնում էր այնպիսի

իրական հզորություն, որ Նիկոլա Պուսենն այդ րոպեից սկսեց հասկանալ ծերունու ասած մութ խոսքերի իսկական իմաստը: Ծերունին դիտում էր նկարը գոհ արտահայտությամբ, բայց առանց խանդավառության, և կարծես ասում էր. «Ես ավելի լավ եմ նկարում»:

— Կյանք կա այդտեղ,— ասաց նա,— իմ խեղճ ուսուցիչն այս նկարում գերազանցել է իրեն, սակայն նրան պակասում է մի քիչ ճշմարտություն կտավի ֆոնում: Մարդը լիովին կենդանի է, կարծես նա վեր է կենում և գալու է մեր կողմը: Բայց օդը, երկինքը, քամին, որ շնչում, տեսնում ու զգում ենք, չկան այդտեղ: Բացի դրանից, այդտեղ եղածը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի մարդ: Արդ, միակ մարդը աստծու ձեռքից դուրս գալուց անմիջապես հետո՝ պետք էր ունենար մի աստվածային բան, որը պակասում է: Մաբյուզեն ինքն էլ դա ասում էր դժկամությամբ, երբ հարբած չէր լինում:

Պուսենն անհանգիստ հարցասիրությամբ նայում էր մերթ ծերունուն, մերթ Պորբյուսին, ապա մոտեցավ վերջինիս՝ կարծես ուզելով հարցնել իրենց հյուրընկալի անունը: Բայց նկարիչը խորհրդավոր ձևով մատը շրթունքների վրա դրեց, և երիտասարդը՝ թեև չափազանց հետաքրքրված՝ լռեց, հուսալով, որ վաղ թե ուշ որևէ բառ թույլ կտա գուշակելու հյուրընկալի անունը, որի հարստությունն ու տաղանդը բավականաչափ ապացուցված էին Պորբյուսի մատուցած հարգանքով և այդ սրահում կուտակված հրաշալիքներով:

Պուսենը պատի մուգ կաղնեփայտե հենակի վրա մի կնոջ սքանչելի դիմանկար տեսնելով՝ գոչեց.

— Ի՜նչ գեղեցիկ Ջորջոնե:

— Ոչ,— պատասխանեց ծերունին,— դուք տեսնում եք իմ առաջին խզբզանքներից մեկը:

— Վա՛յ, գրո՜ղը տանի, ուրեմն ես գտնվում եմ նկարչության աստծու տանը,— միամտաբար գոչեց Պուսենը:

Ծերունին ժպտաց այն մարդու նման, որը վաղուց է ընտելացել այդպիսի գովեստի:

— Վարպետ Ֆրենհոֆեր,— ասաց Պորբյուսը,— կարո՞ղ եք ձեր հռենոսյան լավ գինուց մի քիչ բերել տալ ինձ համար:

— Երկու մեծ տակառ,— պատասխանեց ծերունին:— Մեկը իբր հատուցում այն հաճույքի համար, որ ստացա այս առավոտ ձեր գեղեցիկ մեղավորուհուն տեսնելով, մյուսն էլ իբր բարեկամության նշան:

— Օ՜, եթե ես միշտ տկար չլինեի՜,— շարունակեց Պորբյուսը,— և եթե դուք բարեհաճեիք թույլ տալ ինձ նայելու ձեր **Գեղանի Նուազյոզին**, ապա ես կկարողանայի տալ բարձր, լայն ու խոր մի նկար, ուր մարդիկ կունենային բնական մեծություն:

— Ցույց տալ իմ գո՞ծը,— գոչեց ծերունին խիստ հուզված:— Ոչ, ոչ, ես դեռ պետք է կատարելագործեմ դա: Երեկ երեկոյան, ասաց նա,— ես կարծեցի, թե ավարտել եմ: Նրա աչքերն ինձ թվում էին խոնավ, մարմինը տագնապով լի: Նրա մազերի հյուսերը շարժվում էին: Նա շնչում էր: Թեև հարթ կտավի վրա բնության ռելիեֆը և կլորությունը պատկերելու միջոցը գտա, բայց այս առավոտ, լույսի տակ, նկատեցի սխալս: Օ՜, այդ փառավոր հետևանքին հասնելու համար ես հիմնովին ուսումնասիրել եմ երանգի մեծ վարպետներին, վերլուծել և ծալք առ ծալք բարձրացրել Տիցիանի՝ լույսի այդ արքայի նկարները, ես էլ այդ տիրակալ նկարչի պես, ուրվագծեցի իմ ֆիգուրը բաց գույնի փափուկ ու թանձր զանգվածով, որովհետև ստվերը պատահական է, լա՛վ միտքդ պահիր, փոքրի՛կ: Ապա վերադարձա իմ գործին և կիսաներկերի գլասիների միջոցով, որոնց

թափանցիկությունն աստիճանաբար նվազեցնում էի, պատկերեցի ամենազորեղ ստվերները, հասցնելով դրանք սևի. որովհետև սովորական նկարիչների ստվերներն այն նյութից չեն, ինչ նրանց բաց երանգները. դրանք փայտ են, թուջ են, ամեն ինչ են, բացի ստվերում գտնվող մարմնից: Զգում ես, որ եթե նրանց նկարած անձն իր դիրքը փոխեր, ստվերոտ տեղերը չպիտի մաքրվեին և լուսավոր չպիտի դառնային: Ես խուսափեցի այս թերությունից, ուր ամենանշանավորներից շատերն են ընկել, և իմ նկարում սպիտակությունը զգացվում է հարատև ստվերի մթության տակ: Տգետների այն բազմության նման, որոնք երևակայում են, թե ճիշտ են նկարում, քանի որ հոգատարությամբ հարթված մի գիծ են քաշում, ես չոր կերպով չեմ նշել իմ ֆիգուրի արտաքին եզրերը և դրսևորել անատոմիական նվազագույն մանրամասնությունները, որովհետև մարդկային մարմինը գծերով չի վերջանում: Այս տեսակետից, քանդակագործները կարող են ավելի մոտենալ ճշմարտությանը, քան թե մենք: Բնությունը բաղկացած է մի շարք իրար մեջ փաթաթվող կլորություններից, խստորեն ասած, գծանկար գոյություն չունի: Մի՛ ծիծաղեք, երիտասա՛րդ, ինչքան էլ տարօրինակ թվան ձեզ այս խոսքերը, մի օր կհասկանաք նրա շարժառիթները: Գիծն այն միջոցն է, որով մարդն իրեն հաշիվ է տալիս լույսի՝ առարկաների վրա գործած էֆեկտի մասին, իսկ գծեր չկան բնության մեջ, ուր յուրաքանչյուր բան ինքնին ցայտուն է.— նկարում են մոդելը հանելով, այսինքն՝ պոկում են իրերն իրենց միջավայրից. լույսի բաշխումն է միայն տեսք տալիս մարմիններին: Ուստի ես կազմեցի իմ ուրվանկարը, շրջագծերի վրա տարածեցի խարտյաշ ու վառ կիսաներկերի մի ամպ, որի հետևանքն այն է, որ չես կարող մատդ դնել ճիշտ այն տեղի վրա, ուր շրջագծերը հանդիպում են ֆոնին: Մոտիկից այս աշխատանքը կարծես աղվամազով է ծածկված ու զուրկ է ճշգրտությունից, բայց երկու քայլի վրայից ամեն ինչ որոշակիանում է, ցայտուն դառնում ու անջատվում. մարմինը շարժվում է, ձևերը ցցուն են դառնում և զգում ես, որ օդը շարժվում է շուրջը: Բայց և այնպես ես գոհ չեմ, կասկածներ ունեմ: Գուցե պետք էր ոչ մի գծիկ էլ չնկարել, և ավելի լավ էր ֆիգուրն սկսել մեջտեղից՝ նախ ամենից ավելի լուսավորված ցցուններից, ապա անցնել ամենամութ մասերին: Այսպես չի՞ վարվում արդյոք արևը՝ տիեզերքի այդ աստվածային նկարիչը: Ո՛վ բնություն, բնությո՛ւն, երբևիցե մեկը կարողացե՞լ է քեզ բռնել քո խուսափումի միջոցին: Լսեցե՛ք, ծայրահեղ գիտությունը, ինչպես և տգիտությունը, հանգում է բացասման: Ես կասկածո՞ւմ եմ իմ գործին:

Ծերունին մի փոքր ընդհատեց, ապա շարունակեց.

— Ահա տասը տարի է, երիտասա՛րդ, որ ես աշխատում եմ. իսկ ի՞նչ են տասը կարճ տարիներ, երբ հարցը վերաբերում է բնության դեմ պայքարելուն: Մենք չգիտենք թե ինչքան ժամանակ գործադրեց Պիգմալիոնը, կերտելու համար քայլել կարողացող միակ արձանը:

Ծերունին ընկավ խոր երազանքի մեջ և աչքերը սևեռած մնալով՝ սկսեց մեքենաբար խաղալ իր դանակի հետ:

— Այժմ արդեն իր **ոգու** հետ է խոսում,— ասաց ցածր ձայնով Պորբյուսը:

Այս խոսքի վրա, Նիկոլա Պուսենն զգաց, որ գտնվում է արվեստագետի մի անբացատրելի հետաքրքրասիրության զորության ներքո: Այդ սպիտակ աչքերով ուշադիր ու ընդարմացած ծերունին դառնալով նրա համար մարդուց ավելի մի բան, երևաց որպես մի անծանոթ ոլորտում ապրող արտառոց ոգի: Նա հազարավոր խառն մտքեր է արթնացնում հոգու մեջ: Չի կարելի սահմանել այդպիսի կախարդական ներգործության մեջ արտահայտվող հոգեկան կյանքի երևույթը, ինչպես չի կարելի վերարտադրել այն հուզումը, որ հարուցում է հայրենիքը հիշեցնող երգը՝ աքսորականի սրտում: Այն արհամարհանքը, որ այդ ծերունին ձևացնում էր, թե տածում է արվեստի ամենագեղեցիկ ձեռնարկումների նկատմամբ, նրա հարստությունը, շարժուձևերը, Պորբյուսի ցուցաբերած ակնածանքը, այդքան երկար ժամանակ ծածուկ պահված այդ գործը՝

համբերության ու անկասկած հանճարի գործը (դրան հավատալու համար բավական էր Կույսի գլուխը, որի վրա երիտասարդ Պուսենն այնքան անկեղծությամբ հիացել էր, և որը դեռ գեղեցիկ էր նույնիսկ Մաբյուզեի «Ադամի» կողքին)՝ ապացուցում էին արվեստի իշխաններից մեկի կայսերական հմտությունը. այդ ծերունու մեջ ամեն ինչ դուրս էր գալիս մարդկային բնության սահմաններից: Նիկոլա Պուսենի հարուստ երևակայությունը այդ գերբնական էակի մեջ հստակ և որոշակի գտավ արվեստագետի խառնվածքի կատարյալ պատկերը, այն խուլ խառնվածքի, որին այնքան իշխանություն է տրված, և որը շատ հաճախ ի չարն է գործ դնում այդ, իր հետևից տանելով սառնորեն դատող մարդկանց, քաղքենիների և նույնիսկ մի քանի արվեստասերների՝ հազարավոր քարքարոտ ուղիներով, ուր նրանց համար ոչինչ չկա, մինչդեռ իր ֆանտազիաների մեջ խելահեղ նրա հանճարը՝ այդ սպիտակ թևերով աղջիկը, այնտեղ էպոպեներ, դղյակներ ու արվեստի գործեր է տեսնում: Ծաղրող ու բարի, արգասավոր ու աղքատ խառնվածք: Այսպիսով, խանդավառ Պուսենի համար այդ ծերունին, մի հանկարծահաս կերպարանափոխությամբ, դարձել էր հենց Արվեստը իր գաղտնիքներով, մոլեգնություններով ու երազանքներով լի արվեստը:

— Այո, ի՛մ սիրելի Պորբյուս,— շարունակեց Ֆրենհոֆերը.— ինձ մինչև հիմա էլ չի վիճակվել տեսնել մի անբասիր կին, մի մարմին, որի շրջագծերն ունենան կատարյալ գեղեցկություն, և որի մարմնագույնը... Բայց ո՞ւր է նա ապրում,— ասաց նա ընդհատելով իրեն,— հին աշխարհի մարդկանց այդ անգտանելի ու այնքան հաճախ փնտրված Վեներան, որի հազիվ մի քանի ցիրուցան գեղեցկություններին ենք հանդիպում: Օ՜, լոկ մի րոպե, միայն մի անգամ աստվածային, կատարյալ բնությունը, մի խոսքով իդեալականը տեսնելու համար կտայի ամբողջ հարստությունս, և կգնայի քեզ փնտրելու քո սրբարանում, ո՜վ երկնային գեղեցկություն: Որփեոսի նման կիջնեի արվեստի դժոխքը՝ կյանքն այնտեղից ետ բերելու համար:

— Մենք կարող ենք գնալ այստեղից,— ասաց Պորբյուսը Պուսենին,— նա մեզ այլևս չի լսում, այլևս չի տեսնում:

— Գնանք նրա արվեստանոցը,— պատասխանեց զմայլած երիտասարդը:

— Օ՜, ծեր ասպետը լավ է պաշտպանել դրա մուտքը: Նրա գանձերն այնքան լավ են պահպանված, որ մենք չենք կարող հասնել դրանց: Իմ մեջ արդեն ծագել է այդ ցանկությունն ու ֆանտազիան. քեզնից առաջ ես փորձել եմ թափանցել նրա գաղտնիքը:

— Ուրեմն այստեղ գաղտնի՞ք կա:

— Այո,— պատասխանեց Պորբյուսը:— Ծեր Ֆրենհոֆերը միակ աշակերտն է, որ Մաբյուզեն կամեցել է պատրաստել: Ֆրենհոֆերը դառնալով նրա բարեկամը, նրա փրկիչը, նրա հայրը՝ իր գանձերի մեծագույն մասը զոհաբերել է բավարարելու համար Մաբյուզեի ցանկությունները. դրանց փոխարեն Մաբյուզեն կտակել է նրան ռելիեֆի գաղտնիքը, ֆիգուրներին այն արտակարգ կյանքը, բնության այդ ծաղիկը, մեզ հավիտենապես հուսահատեցնող այդ բանը տալու կարողությունը, մի արվեստ, որին նա այնպե՜ս լավ էր տիրապետում: Մի անգամ Մաբյուզեն ծախել ու խմիչքի էր տվել իր ծաղկանկար մետաքսե զգեստը, որը պարտավոր էր հագնել Կարլոս V-ի դուրս գալու ժամանակ, նա ուղեկցեց իր հովանավորին մետաքսանման նկարված թղթե հագուստով: Մաբյուզեի հագած մահուդի առանձնակի փայլը զարմացրեց կայսրին, որն ուզելով դրա համար շնորհավորել ծեր հարբեցողի հովանավորին՝ բաց արավ խաբեությունը: Ֆրենհոֆերը մեր արվեստի համար մեծ կիրք ունեցող մարդ է և ավելի բարձր ավելի հեռու է տեսնում, քան մյուս նկարիչները: Նա խոր կերպով մտածել է գույների և գծերի բացարձակ ճշտության վրա. սակայն այնքան է հետազոտել, որ ի վերջո կասկածում է իր հետազոտությունների առարկայի վրա: Իր հուսահատության րոպեներին նա պնդում է, թե գծանկարը գոյություն չունի, թե գծերով կարելի է վերարտադրել միմիայն

երկրաչափական ֆիգուրները, մի բան, որ ճշմարտությունից դուրս է, քանի որ գծով ու սևով, որը գույն չէ, կարելի է որևէ ֆիգուր նկարել, իսկ դա ապացուցում է, որ մեր արվեստը բնության նման կազմված է անհամար տարրերից. գծանկարը տալիս է կմախքը, գույնը կյանքն է, բայց կյանքն առանց կմախքի ավելի անկատար բան է, քան անկյանք կմախքը: Եվ վերջապես, կա մի բան, որ է՛լ ավելի ճշմարիտ է, քան այս բոլորը. դա յուրաքանչյուր նկարչի պրակտիկան ու դիտողունակությունն է, և եթե դատողությունն ու պոեզիան կռվեն վրձինների հետ, հետևանքը կլինի կասկածը, ինչպես ծերուկին է պատահել, որը նույնքան խենթ է, որքան նկարիչ է: Այդ մեծագույն նկարիչը դժբախտություն է ունեցել հարուստ ծնվելու, որը նրան թույլ է տվել թրև գալ ու երազել: Մի նմանվեք նրան, աշխատեցե՛ք. նկարիչները պետք է մտածեն միայն վրձինը ձեռքին:

— Մենք մուտք կգործենք այդտեղ,— գոչեց Պուսենն, այլևս չլսելով Պորբյուսին և ոչ մի բանից չկասկածելով:

Պորբյուսը ժպտաց անծանոթ երիտասարդի խանդավառության վրա, և բաժանվեց նրանից, հրավիրելով այցելել իրեն:

Նիկոլա Պուսենը դանդաղ քայլերով վերադարձավ դեպի լա-Հարպ փողոցը և առանց նկատելու անցավ իր համեստ պանդոկի առջևից: Անհանգիստ արագությամբ բարձրանալով խղճուկ սանդուղքը՝ նա հասավ մի բարձրադիր սենյակի, որ գտնվում էր Փարիզի հին տների աղավնատան նմանող թեթև ու պարզ տանիքի տակ: Այդ սենյակի միակ ու խավար լուսամուտի մոտ նա տեսավ մի դեռատի աղջիկ, որ դռան ճռռոցի վրա հանկարծ վեր ցատկեց սիրով լի շարժումով: Նա ճանաչել էր նկարչին դռան սողնակը քաշելու ձևից:

— Ի՞նչ է եղել քեզ,— հարցրեց աղջիկը:

— Ես, ես,— գոչեց երիտասարդը հրճվանքից խեղդվելով,— ես զգացի, որ նկարի՛չ եմ: Մինչև հիմա կասկածում էի ինձնից, բայց այս առավոտ հավատացի ինքս ինձ: Ես կարող եմ մեծ մա՛րդ դառնալ: Այո, Ժիլլե՛տ, մենք կլինենք հարո՛ւստ, երջանի՛կ: Ոսկի կա այս վրձինների մեջ:

Բայց հանկարծ նա լռեց: Նրա լրջախոհ ու կորովի դեմքը կորցրեց հրճվանքի արտահայտությունը, երբ նա համեմատեց իր անհուն հույսերը խղճուկ միջոցների հետ: Պատերը ծածկված էին մատիտի էսքիզների հասարակ թղթերով: Նա նույնիսկ չորս մաքուր, չօգտագործված կտավ էլ չուներ: Ներկերն այդ ժամանակ բարձր գին ունեին, և խեղճ երիտասարդը տեսնում էր, որ իր ներկատախտակը գրեթե մերկ է: Այս թշվառության գրկում նա ուներ ու զգում էր հոգեկան անհուն հարստություններ և լափող հանճարի գերառատություն: Իր ազնվական բարեկամներից մեկի, գուցե և իր տաղանդի միջոցով Փարիզ գալով՝ նա հանկարծ հանդիպել էր մի սիրուհու, այն ազնիվ ու վեհ հոգիներից մեկին, որոնք գալիս են տառապելու որևէ մեծ մարդու մոտ, հաշտվել թշվառության հետ ու ճգնելով հասկանալ նրա քմահաճույքները: Նրանք ուժեղ են թե՛ թշվառության, թե՛ սիրո մեջ, ինչպես ուրիշները չեն վախենում պերճանքը կրելու և իրենց անզգայությունը ցուցադրելու մեջ: Ժիլլետի շրթունքների վրա հածող ժպիտը ոսկեզօծում էր այդ ձեղնահարկը և մրցակցում երկնքի փայլի հետ: Արևը միշտ չէր փայլում, մինչդեռ Ժիլլետը շարունակ այդտեղ էր՝ ամփոփված իր սիրո մեջ, կապված իր երջանկության, տառապանքին, մխիթարելով հանճարին, որը արվեստին տիրանալուց առաջ անձնատուր էր եղել սիրո:

— Էսի՛ր, Ժիլլե՛տ, ե՛կ այստեղ:

Հնազանդ ու զվարթ աղջիկը թռավ նկարչի ծնկների վրա: Նա ամբողջովին նազանք էր ու գեղեցկություն, գարնան պես գեղանի, զարդարված կանացի բոլոր հարստություններով, լուսավորված իր գեղեցիկ հոգու կրակով:

— Աստվա՛ծ իմ,— գոչեց երիտասարդը,— երբեք չեմ համարձակվի ասել նրան...

— Գաղտնի՞ք է,— վրա բերեց աղջիկը,— ուզում եմ իմանալ:

Պուսենը մնաց մտածկոտ:

— Դե խոսի՛ր:

— Ժիլլե՛տ, խե՛ղճ սիրեցյալս:

— Ա՛, որևէ բա՞ն ես ուզում ինձնից:

— Այո:

— Եթե ուզում ես, որ անցած օրվա պես նկարելու համար կանգնեմ առջևդ,— ասաց Ժիլլետը մի քիչ խռովկան արտահայտությամբ,— էլ երբե՛ք չեմ համաձայնի, որովհետև այդ բոպեներին քո աչքերն ինձ այլևս ոչինչ չեն ասում: Դու այլևս իմ մասին չես մտածում, թեև ինձ ես նայում:

— Կգերադասեի՞ր ինձ տեսնել մի այլ կին նկարելիս:

— Գուցե,— ասաց Ժիլլետը,— եթե նա շատ տգեղ լիներ:

— Շատ լավ,— շարունակեց Պուսենը լուրջ շեշտով,— իսկ եթե իմ գալիք փառքի, ինձ մի մեծ նկարիչ դարձնելու համար պետք լիներ մի ուրիշի առջև կանգնել:

— Ուզում ես ինձ փորձե՞լ,— պատասխանեց աղջիկը,— լավ գիտես, որ չեմ գնա:

Պուսենը գլուխը խոնարհեց կրծքի վրա՝ նման այն մարդուն, որ կռանում է իր հոգու համար խիստ ուժեղ որևէ հրճվանքից կամ վշտից:

— Լսի՛ր,— ասաց աղջիկը քաշելով նրա մաշած բաճկոնակի թևը,— ես քեզ ասել եմ, Նի՛կ, որ կյանքս կտամ քեզ համար, բայց երբեք չեմ խոստացել, որ կենդանությանս օրոք կհրաժարվեմ իմ սիրուց:

— Հրաժարվե՞լ սիրուց,— գոչեց Պուսենը:

— Եթե ես այդպես ինձ ցույց տամ մի ուրիշի՝ դու ինձ այլևս չես սիրի: Ես ինքս էլ ինձ անարժան կհամարեմ քեզ: Քո քմահաճություններին հնազանդվելն արդյոք բնական ու պարզ բան չէ՞: Հակառակ կամքիս, ես երջանիկ, նույնիսկ հպարտ եմ քո կամքը կատարելու: Սակայն մի ուրիշի համար... ֆո՛ւ:

— Ների՛ր, Ժիլլե՛տ,— ասաց նկարիչն ընկնելով նրա ոտները:— Գերադասում եմ սիրված լինել, քան թե փառքի տիրացած: Դու ինձ համար ավելի գեղեցիկ ես, քան հարստությունն ու պատիվները: Դե՛ն զցիր շուտով վրձիններս, վառի՛ր էսքիզներս: Ես սխալվել եմ: Իմ կոչումը քեզ սիրելն է: Ես նկարիչ չեմ, սիրահար եմ: Կորչի՛ արվեստն էլ, նրա բոլոր գաղտնիքներն էլ:

Ժիլլետը երջանիկ ու դյութված՝ հիանում էր նրա վրա: Նա իշխում էր, զգում բնազդաբար, որ արվեստը մոռացվում է իր համար և նետվել է իր ոտներին ինչպես խնկի մի հատիկ:

— Սակայն նա մի ծերունի է միայն,— շարունակեց Պուսենը: Նա քո մեջ տեսնելու է լոկ գեղեցիկ ձևը: Դու այնքա՛ն անթերի ես:

— Ի՛նչ չէի կատարի հանուն սիրո,— գոչեց Ժիլլետը, պատրաստ՝ զոհաբերելու իր սիրո կասկածները, որպեսզի վարձատրի իր սիրեկանի արած զոհողությունները:— Բայց,— շարունակեց նա,— դա կնշանակեր կորչել: Օ՛, կորչել քե՛զ համար: Այո, դա շատ գեղեցիկ է, սակայն դու ինձ կմոռանաս: Օ՛, այդ ինչ վատ միտք ես հղացել դու:

— Այո, հղացա, և քեզ էլ սիրում եմ,— ասաց Պուսենը մի տեսակ զղջալով:— Բայց ուրեմն ես ստո՛ր մարդ եմ:

— Չհարցնե՞նք հայր Հարդուենի կարծիքը,— ասաց Ժիլլետը:

— Օ՛, ոչ, սա պետք է մնա մեր երկուսի մեջ:

— Դե լա՛վ, կգնամ, միայն թե այնտեղ չպիտի լինես,— ասաց Ժիլլետը:— Կանգնիր դռանը, զինված քո դաշույնով. եթե գոռամ՝ ներս մտիր ու սպանիր նկարչին:

Պուսենն իր արվեստից զատ այլևս ոչինչ չտեսնելով՝ Ժիլլետին սեղմեց իր բազուկների մեջ:

— Այլևս ինձ չի՛ սիրում,— մտածեց աղջիկը, երբ մնաց մենակ:

Եվ արդեն զղջում էր իր որոշման համար: Բայց շատ չանցած մատնվեց զղջումից ավելի դաժան մի սոսկումի, ջանաց արտաքսել իր սրտից բարձրացող մի մտածմունք: Նրան թվում էր, թե ինքը արդեն պակաս է սիրում նկարչին՝ կասկածելով, որ նա առաջվանից նվազ արժանի է հարգանքի:

2

ԿԱՏԵՐԻՆԱ ԼԵՄԿՈ

Պուսենի և Պորբյուսի հանդիպումից երեք ամիս հետո, վերջինս եկավ վարպետ Ֆրենհոֆերին այցելելու: Ծերունին այդ ժամանակ մատնված էր այն խոր ու ինքնաբուխ հուսալքմանը, որի պատճառը, եթե հավատանք բժշկության մաթեմատիկոսներին, վատ մարսողությունն է, քամին, շոգը կամ ենթաստամոքսային հյուսվածքների ուռչելը, իսկ սպիրիտուալիստների կարծիքով՝ մեր բարոյական բնության անկատարությունն է: Ծերունին պարզապես ու իսկապես հոգնել էր իր խորհրդավոր նկարն ավարտելով: Նա նվաղուն կերպով նստել էր լայն, քանդակված ու սև կաշվով պատված կաղնեփայտե գահավորակի վրա և առանց թողնելու իր մելամաղձոտ դիրքը՝ Պորբյուսի վրա գցեց իր ձանձրույթին վարժված մարդու հայացքը:

— Ուրեմն ի՛նչ, վարպե՛տ,— ասաց Պորբյուսը,— մուգակապույտը, որ գնացիք Բրյուգգեից բերելու, վա՞տ էր, կամ թե չկարողացա՞ք արդյոք մանրել մեր նոր սպիտակը, ձեր յո՞ւղն է վատորակ, թե՞ վրձիններն են ըմբոստ:

— Ավա՛ղ,— գոչեց ծերունին,— մի րոպե ես հավատացի, որ աշխատանքս ավարտված է, բայց անկասկած սխալված եմ մի քանի մանրամասնությունների մեջ, և չեմ հանգստանա, մինչև կասկածներս չփարատեմ: Ես որոշել եմ ճամփորդել, գնալ Թյուրքիա, Հունաստան, Ասիա, որևէ մոդել որոնելու և նկարս բազմաթիվ բնական օրինակների հետ համեմատելու համար: Գուցե

այնտեղ, վերևում, իմ ունեցածն ինքը բնությունն է,— շարունակեց նա գոհունակության ժպիտով։— Երբեմն ես գրեթե վախենում եմ, որ մի թեթև շունչ կարթնացնի այդ կնոջը, և նա կանհետանա։

Ապա նա հանկարծ վեր կացավ, կարծես մեկնելու համար։

— Օ՜, օ՜,— վրա բերեց Պորբյուսը,— ճիշտ ժամանակին եմ եկել՝ ձեզ ծախսերից ու ճամփորդության հոգնությունից ազատելու համար։

— Ինչպե՞ս,— հարցրեց զարմացած Ֆրենհոֆերը։

— Երիտասարդ Պուսենին սիրում է մի կին, որի անզուգական գեղեցկությունը ոչ մի անկատարություն չունի։ Բայց, սիրելի՛ վարպետ, եթե նա համաձայնի այդ կնոջը տրամադրել ձեզ, գոնե պետք է մեզ թույլ տաք ձեր նկարը տեսնել։

Ծերունին մնաց անշարժ կանգնած՝ կատարելապես ապշած վիճակում։

— Ինչպե՜ս,— գոչեց վերջապես նա վշտագին,— ցույց տամ իմ ստեղծագործությո՞ւնը, իմ կի՞նը, ճեղքեմ այն քո՞ղը, որի տակ անարատ կերպով ծածկել եմ իմ երջանկությունը։ Չէ՞ որ դա զարհուրելի պոռնկություն կլիներ։ Ահա տասը տարի է, որ ես ապրում եմ այդ կնոջ հետ. նա իմն է, միայն իմն է ու ինձ է սիրում։ Չէ՞ր ժպտում նա ինձ ամեն անգամ, երբ վրձինի հարվածներ էի տալիս նրան. նա հոգի ունի, ես եմ օժտել նրան այդ հոգով։ Նա կշիկներ, եթե իմ աչքերից տարբեր աչքեր սևեռվեին նրա վրա։ Ցո՜ւյց տամ նրան, բայց այդ ո՞ր ամուսինն է, ո՞ր սիրեկանն է, որ բավականաչափ ստոր լինի ու իր կնոջը տանի դեպի անպատվություն։ Երբ դու որևէ նկար ես պատրաստում արքունիքի համար, համակ հոգիդ չես դնում դրա մեջ, դու պալատականներին ծախում ես միմիայն ներկված մանեկեններ։ Իմ նկարը նկար չէ, դա զգացում է, կի՜րք է։ Ծնվելով իմ արվեստանոցում՝ նա պետք է մնա այնտեղ կույս, և կարող է դուրս գալ այնտեղից միայն հագնված։ Պոեզիան ու կանայք միայն իրենց սիրեկաններին են մերկ հանձնվում։ Ունե՞նք մենք արդյոք Ռաֆայելի մոդելները, Արիոստի Անջելիկան, Դանթեի Բեաթրիչեն։ Ո՜չ, նրանց Չևերը միայն ունենք։ Իսկ այն գործը, որ պահել եմ վերևում, փականքներիս տակ, բացառություն է մեր արվեստի մեջ։ Դա նկար չէ, այլ մի կին, մի կին, որի հետ միասին ես լալիս եմ, ծիծաղում, զրուցում ու մտածում։ Ուզում ես, որ հանկարծ բաժանվե՞մ տասը տարիների երջանկությունից, ինչպես դեն են շպրտում որևէ վերարկու, որ հանկարծ դադարե՞մ հայր, սիրահար ու աստված լինելուց, քանի որ այդ կինն արարած չէ, արարչություն է։ Թող քո երիտասարդը գա, կտամ նրան գանձերս, կտամ Կորրեջոյի, Միքել Անջելոյի, Տիցիանի նկարները, կհամբուրեմ նրա ոտնահետքերը փոշու վրա, բայց նրան դարձնեմ ինձ ախոյա՞ն. ամո՜թ ինձ։ Հա՜, հա՜, ես շատ ավելի սիրահար եմ, քան նկարիչ։ Այո, ես ուժ կունենամ վերջին շունչս փչելիս այրելու իմ **«Գեղանի Նուազյոզին»**, բայց թույլ չեմ տա, որ նրան ուղղվի որևէ տղամարդու, երիտասարդի, նկարչի հայացքը, ո՜չ, ո՜չ։ Հաջորդ օրը ես կսպանեի նրան, ով թեկուզ մի հայացքով իսկ արատավորեր նրան։ Ես քեզ կսպանեի իսկույն, քեզ, բարեկամիս, եթե դու ծունկ չչոքեիր նրա առաջ։ Ուզո՞ւմ ես ուրեմն, որ կուռքս ենթարկեմ անպիտան մարդկանց սառն հայացքներին ու տխմար քննադատություններին։ Օ՜, սերը գաղտնիք է, նա ապրում է սրտերի խորքում, և ամեն ինչ կորած է, երբ որևէ մարդ ասում է թեկուզ իր բարեկամին.

— Սա՜ է սիրածս կինը։

Ծերունին կարծես նորից երիտասարդացել էր, նրա աչքերում փայլ ու կյանք կար, գունատ այտերը շառագունել էին վառ կարմրով ու ձեռքերը դողում էին։ Պորբյուսը՝ զարմացած այն կրքոտ ուժից, որով ծերունին ասաց այս խոսքերը, չգիտեր ինչ պատասխաներ այդ որքան նոր, նույնքան և խոր զգացմունքին։ Ֆրենհոֆերը ողջամի՞տ էր, թե՞ խենթ։ Չէ՞ր ենթարկվել արդյոք արվեստագետի ինչ-

որ քմայքի, կամ թե նրա արտահայտած մտքերը չէի՞ն բխում արդյոք այն անբացատրելի ֆանատիզմից, որ առաջանում է մեր մեջ մի մեծ գործի երկարատև հղացումից: Կարելի է հուսալ, թե հնարավոր է հաշտվել այդպիսի արտառոց կրքի հետ:

Մատնված լինելով այս մտքերին՝ Պորբյուսն ասաց ծերունուն.

— Բայց չէ՞ որ կնոջ դիմաց կին եք ստանում: Պուսենն իր սիրուհուն միթե չի՞ հանձնում ձեր հայացքներին:

— Ի՜նչ սիրուհի,— պատասխանեց Ֆրենհոֆերը:— Վաղ թե ուշ այդ կինը կդավաճանի նրան, իսկ իմս ինձ մի՜շտ հավատարիմ կլինի:

— Դե լավ,— շարունակեց Պորբյուսը,— է՛լ չխոսենք դրա մասին: Բայց նախքան դուք կգտնեք, թեկուզ Ասիայում, մի այնպիսի գեղեցիկ, այնպիսի կատարյալ կին, որի մասին ես խոսում եմ, գուցե մեռնեք, առանց ավարտելու ձեր նկարը:

— Օ՜, նա ավարտված է արդեն: Նրան տեսնողը կկարծի, թե տեսնում է թավշե անկողնի վրա, վարագույրների տակ պառկած մի կին: Նրա մոտ դրված է մի ոսկե եռոտանի, որից անուշաբույր ծուխ է բարձրանում: Դու ցանկություն կունենաս բռնելու վարագույրները պահող պարանների ոսկեզօծ գնդածայրը, և քեզ կթվա, թե տեսնում ես **Կատերինա Լեսկոյի**՝ «Գեղանի Նուազյոզ» կոչված կուրտիզանուհու լանջը, նրա շնչառության շարժումը: Այնուամենայնիվ ես կուզենայի վստահ լինել...

— Դե ուրեմն գնա՛ Ասիա,— պատասխանեց Պորբյուսը մի տեսակ վարանում նկատելով Ֆրենհոֆերի հայացքի մեջ:

Եվ Պորբյուսը մի քանի քայլ արեց դեպի սրահի դուռը:

Այդ րոպեին Ժիլլետն ու Նիկոլա Պուսենը հասել էին Ֆրենհոֆերի տան մոտ: Երբ մանկամարդ աղջիկը հասավ մուտքին՝ թողեց նկարչի թևը և ետ-ետ գնաց՝ կարծես բռնելով ինչ-որ հանկարծական նախազգացումով:

— Իսկ ի՞նչ անելու եմ գալիս այստեղ,— հարցրեց նա իր սիրեկանին տագնապալի ձայնով ու շեշտակի նայելով նրան:

— Ժիլլե՛տ, դու քո կամքի տերն ես, և ես ուզում եմ հնազանդվել քեզ ամեն բանում: Դու իմ խիղճն ես ու իմ փառքը: Վերադարձի՛ր տուն, ես ավելի երջանիկ կլինեմ գուցե, եթե դու…

— Իմ տե՞րն եմ ես արդյոք, երբ դու այդպես ես խոսում հետս: Օ՜, ոչ, ես դառնում եմ լոկ մի երեխա: Դե լա՜վ,— ավելացրեց նա կարծես մի ուժգին ճիգ գործադրելով,— եթե մեր սերը չքանա, եթե մի խոր ափսոսանք մտնի իմ սիրտը, քո հոչակը չի՞ դառնա արդյոք քո ցանկություններին հնազանդելուս վարձատրությունը: Ներս մտնենք, ես դեռ կապրեմ, թեկուզ իբրև հուշ մնալով քո ներկատախտակի վրա:

Տան դուռը բաց անելով, սիրահարներն իսկույն հանդիպեցին Պորբյուսին, որը զարմանալով Ժիլլետի գեղեցկությունից (աղջկա աչքերն այդ միջոցին լի էին արտասուքով և նա դողում էր), բռնեց նրան և տանելով ծերունու մոտ՝ ասաց.

— Նայեցեք, մի՞թե նա չարժե աշխարհի բոլոր գլուխգործոցները:

Ֆրենհոֆերը ցնցվեց: Ժիլլետը կանգնած էր նրա առաջ միամիտ ու պարզ դիրքով, նման այն անմեղ, ահաբեկված ու հափշտակված դեռատի վրացուհուն, որին ավազակները ներկայացնում են գերեվաճառին: Ամոթխած կարմրությունը պատել էր նրա դեմքը: Նա խոնարհել էր աչքերը, ձեռքերը կախ էին ընկել կողքերից, ուժերը կարծես սպառվում էին և արցունքները բողոքում էին նրա ամոթխածության նկատմամբ արված բռնության դեմ: Այդ րոպեին Պուսենը չափազանց զոջացած այս գեղեցիկ գանձն իր ձեռնահարկից դուրս հանելու համար՝ անիծեց ինքն իրեն: Նա դարձավ ավելի սիրող, քան արվեստագետ և հազարավոր խղճի խայթեր ծակեցին նրա սիրտը, երբ տեսավ, որ ծերունու աչքերը երիտասարդացան և նկարիչների սովորությամբ, այսպես ասած, մերկացրին դեռատի աղջկան՝ կռահելով նրա ամենաթաքուն ձևերը: Պուսենն այդ րոպեին համակվեց ճշմարիտ սիրո կատաղի խանդով:

— Ժիլլե՛տ, գնա՛նք այստեղից,— գոչեց նա:

Այս շեշտից ու գոչյունից ուրախացած սիրուհին նայեց նրան, տեսավ նրան ու նետվեց նրա գիրկը:

— Օ՜, ուրեմն դու ինձ սիրում ես,— ասաց աղջիկը և արցունքները հոսեցին:

Իր տառապանքը զսպելու կորով ունենալուց հետո, այժմ նա ուժ չուներ թաքցնելու իր երջանկությունը:

— Օ՜, մի րոպեով թողեք նրան ինձ,— ասաց ծեր նկարիչը,— և դուք նրան կհամեմատեք իմ **Կատերինայի** հետ: Այո՛, ես համաձայն եմ:

Ֆրենհոֆերի ձայնի մեջ դեռևս սեր կար: Նա կարծես ուզում էր ավելի հաճոյանալ իր երևակայական կնոջը և նախօրոք վայելում էր այն հաղթանակը, որ իր կույսի գեղեցկությունը տանելու էր այդ իրական աղջկա գեղեցկության վրա:

— Մի՛ թողնեք, որ իր խոսքից հրաժարվի,— գոչեց Պորբյուսը խփելով Պուսենի ուսին:— Սիրո պտուղները շուտ են անցնում, մինչդեռ արվեստի պտուղներն անմահ են:

— Նրա համար ես ուրեմն միայն կին եմ,— պատասխանեց Ժիլլետը ուշադրությամբ նայելով Պուսենին ու Պորբյուսին: Ապա հպարտությամբ բարձրացրեց գլուխը, բայց Ֆրենհոֆերի վրա մի փայլակնացայտ հայացք նետելուց հետո, երբ տեսավ, որ իր սիրականը դարձյալ զբաղված է դիտելով այն նկարը, որ մի ժամանակ ընդունել էր իբր Ջորջոնեի գործ՝ ասաց.

— Լա՛վ, գնանք վերև: Նա երբեք ինձ այդպես չի նայել:

— Ծերունի՛,— ասաց Պուսենը՝ Ժիլլետի ձայնի վրա դուրս գալով իր մտախոհությունից,— տե՛ս այս սուրը. ես դա կխրեմ կուրծքդ, եթե այս դեռատի աղջիկը տրտունջի թեկուզ մի բառ արտասանի, կրակ կգցեմ տունդ, և ոչ ոք դուրս չի գա այստեղից: Հասկանո՞ւմ ես:

Նիկոլա Պուսենը մռայլ էր, և նրա խոսքերն ահավոր թվացին: Երիտասարդ նկարչի վերաբերմունքը, մանավանդ նրա ժպիտը մխիթարեցին Ժիլլետին, որը համարյա թե ներեց նրան՝ իրեն նկարչությանը և իր փառավոր ապագային զոհաբերելու համար: Պորբյուսն ու Պուսենը մնացին արվեստանոցի դռան մոտ ու լուռ դիտում էին իրար: Եթե սկզբում **«Եգիպտուհի Մարիամի»** ստեղծիչը թույլ տվեց մի քանի բացականչություններ.— օ՜, նա շորերը հանո՜ւմ է. ասում է՝ լույսի տակ եկեք, համեմատո՜ւմ է.— ապա շուտով նա լռեց՝ նայելով Պուսենին, որի դեմքը չափազանց տխուր էր: Ու թեև ծեր նկարիչներն արվեստի ներկայությամբ այլևս ուշադրություն չեն դարձնում այդպիսի մանր բաների, բայց Պորբյուսը հիացավ դրանց վրա, այնքա՜ն նայիվ ու գեղեցիկ էին

դրանք: Երիտասարդը ձեռքը դրել էր իր դաշույնի վրա և ականջը հպել դռանը: Երկուսն էլ այդպես կանգնած ստվերի մեջ՝ նման էին բռնակալին հարվածելու ժամին սպասող երկու դավադիրների:

— Մտե՛ք, մտե՛ք,— ասաց ծերունին երջանկությունից ճառագայթելով:— Իմ գործս անթերի է և այժմ կարող եմ հպարտությամբ ցույց տալ դա: Երբեք նկարիչը, վրձինները, գույները, կտավն ու լույսը չպիտի կարողանան **Կատերին Լեսկոյին**՝ գեղանի կուրտիզանուհուն որևէ մրցակցուհի կերտել:

Պորբյուսն ու Պուսենը բուռն հետաքրքրությունից մղված՝ վազեցին փոշով ծածկված մի ընդարձակ արվեստանոցի մեջտեղը, ուր ամեն ինչ անկարգ էր, ուր տեղ-տեղ պատերից կախված նկարներ տեսան: Ամենից առաջ նրանք կանգ առան բնական մեծությամբ ու կիսամերկ նկարված մի կնոջ պատկերի առջև և հիացմունքով համակվեցին:

— Է՛, մի՛ զբաղվեք դրանով,— ասաց Ֆրենհոֆերը,— դա մի նկար է, որ խզբզել եմ մի կեցվածք ուսումնասիրելու համար, և որը ոչ մի արժեք չունի: Ահա իմ սխալանքները,— շարունակեց նա ցույց տալով պատերից կախված սքանչելի կոմպոզիցիաները:

Այս խոսքերի վրա Պորբյուսն ու Պուսենը ապշած, որ այդպիսի գործերի նկատմամբ այսպիսի արհամարհանք է ցուցաբերում, որոնեցին հռչակված նկարը, բայց չկարողացան նկատել:

— Դե, լավ, ա՛յս է,— ասաց ծերունին, որի մազերն անկարգ էին, դեմքը բոցավառված էր գերբնական հափշտակությամբ, աչքերն առկայծում էին, և նա հևում էր սիրով գինովցած երիտասարդի նման:

— Օ՜, իհա՛րկե,— գոչեց նա,— դուք այսքան կատարելություն չէիք սպասում: Դուք գտնվում եք մի կնոջ առջև, այնինչ նկար եք փնտրում: Այնքա՜ն խորություն կա այս կտավի մեջ, օդն այնքան իրական է այնտեղ, որ դուք այն չեք զանազանում մեզ շրջապատող օդից: Ո՞ւր է արվեստը.— կորե՜լ է, անհետացե՜լ: Ահա դեռատի աղջկա իսկական ձևերը: Ճիշտ գույնը գտել եմ, չէ՞, գծի կենդանությունը, որ կարծես ավարտում է մարմինը: Նույն երևույթը չե՞ն ներկայացնում մեզ մթնոլորտում գտնվող առարկաները, ինչպես ջրի միջի ձկները: Հիացեք, թե ինչպես են շրջագծերն անջատվում ֆոնից: Ձեզ չի՞ թվում արդյոք, որ կարող եք ձեռքը քսել նրա մեջքին: Դրա համար յոթը տարի շարունակ ուսումնասիրել եմ լույսի ու առարկաների զուգորդության էֆեկտները: Եվ այս վարսերը, միթե լույսը չի՞ հեղեղում դրանց… Բայց նա շնչե՜լ է կարծես… Տեսնո՜ւմ եք այս կուրծքը: Օ՜, ո՜վ չէր ուզենա ծնկաչոք պաշտել նրան: Մկանները թրթռում են: Այժմ վեր է կենալու, սպասեցեք:

— Որևէ բան տեսնո՞ւմ եք,— հարցրեց Պուսենը Պորբյուսին:

— Ոչ: Իսկ դո՞ւք:

— Ոչինչ:

Երկու նկարիչները թողին ծերունուն իր հափշտակության մեջ և նայեցին, թե արդյոք ուղիղ այդ նկարի վրա ընկնող լույսը չի՞ չեզոքացնում բոլոր էֆեկտները: Ուստի դիտեցին նկարը աջից, ձախից, դեմուդեմից, մերթ կռանալով, մերթ ուղղվելով:

— Այո, իհարկե, նկար է սա,— ասում էր Ֆրենհոֆերը սխալ հասկանալով այդ բարեխիղճ քննության նպատակը:— Ահա, տեսեք, շրջանակը, նկարահաստոցը, ահա, վերջապես, ներկերս ու վրձիններս: Եվ մի խոշոր վրձին վերցնելով՝ միամիտ շարժումով ցույց տվեց նրանց:

— Ծեր լանդսկնեխտը խաղ է անում մեզ հետ,— ասաց Պուսենը՝ վերադառնալով կարծեցյալ նկարի առջև:— Այդտեղ տեսնում եմ միմիայն խառնիխուռն դիզված և բազմաթիվ արտառոց գծերով շրջափակված գույներ, որոնք ներկերի մի պատ են կազմում:

— Մենք սխալվում ենք, նայեցեք...— ասաց Պորբյուսը:

Մոտենալով՝ նրանք նկարի մի անկյունում նկատեցին մի մերկ ոտքի ծայր, որ ջոկվում էր գույների, ներկերի, անորոշ նրբերանգների ու մի տեսակ անձև աղջամուղջի քաոսից, բայց մի սքանչելի, մի կենդանի ոտք: Հիացմունքից քարացած՝ նրանք կանգնեցին անհավատալի, դանդաղ ու հարաճուն կործանումից փրկված այդ բեկորի առջև: Այդ ոտքը երևում էր այդտեղ՝ նման հրկիզված քաղաքի փլատակներից դուրս ցցվող Պարոսի մարմարից շինված որևէ Վեներայի իրանի:

— Սրանց տակ կին կա թաքնված,— գոչեց Պորբյուսը Պուսենին ցույց տալով ներկերի զանազան վերնախավերը, որոնցով ծեր նկարիչը հաջորդաբար ծածկել էր այդ մարմնի բոլոր մասերը՝ ցանկանալով կատարելագործել:

Երկու նկարիչներն էլ ինքնաբերաբար դարձան դեպի Ֆրենհոֆերը՝ սկսելով բացատրել իրար, թեև տարտամորեն, այն հափշտակությունը, որի մեջ ապրում էր ծերունին:

— Նա անկեղծ հավատում է,— ասաց Պորբյուսը:

— Այո, բարեկա՛մ,— պատասխանեց ծերունին սթափվելով,— արվեստի մեջ հավատք է հարկավոր ու երկար ժամանակ պետք է ապրել իր գործի հետ՝ մի այսպիսի ստեղծագործություն արտադրելու համար: Այս ստվերներից մի քանիսը ձեռք եմ բերել երկարատև աշխատանքով: Տեսեք, ա՛յ այստեղ, նրա այտի վրա, աչքերի տակ, կա մի թեթև կիսաստվեր, որը, եթե բնականի վրա զննեք, ձեզ կերևա համարյա անվերարտադրելի: Հապա՛, կհավատա՞ք, թե ի՛նչ անլուր չարչարանքներ եմ կրել այն վերարտադրելու համար: Բայց և այնպես, իմ սիրելի՛ Պորբյուս, ուշադրությամբ դիտիր աշխատանքս, և ավելի լավ կհասկանաս այն, ինչ ասում էի մոդելն ու շրջագծերը մշակելու եղանակի մասին: Նայիր կրծքի վրա ընկնող լույսին ու տե՛ս, թե ինչպես բազմաթիվ խիստ թանձրացված հարվածների ու **փայլերանգների** միջոցով կարողացել եմ վերջապես կենտրոնացնել իսկական լույսը և համադրել դա պայծառ երանգների փայլող սպիտակության հետ: Իսկ մի հակառակ աշխատանք կատարելով, այսինքն՝ ջնջելով ներկի ցցուններն ու անհարթությունները, իմ ֆիգուրի կիսաներկում լողացող շրջագծերը շոյելով, կարողացա ջնջել նույնիսկ գծանկարը ու արհեստական միջոցները և տալ նրան բնականի տեսքն ու կլորությունը: Մոտեցեք, այդպես ավելի լավ կտեսնեք այս աշխատանքը: Հեռվից նա անհետանում է: Ա՛յ, տեսեք, այս կետը, ըստ իս, շատ ուշագրավ է:

Եվ վրձինի ծայրով նա երկու նկարիչներին ցույց տվեց բաց գույնի ներկերի մի թանձր շերտ:

Պորբյուսը խփեց ծերունու ուսին ու դառնալով դեպի Պուսենն ասաց.

— Գիտե՞ք, որ սրան մենք համարում ենք մի մեծ նկարիչ:

— Նա ավելի բանաստեղծ է, քան նկարիչ,— լրջորեն պատասխանեց Պուսենը:

— Այստեղ վերջանում է մեր երկրային արվեստը.— շարունակեց Պորբյուսը դիպչելով կտավին:

— Եվ այդտեղից նա կգնա կորչելու երկնքում,— ասաց Պուսենը:

— Ինչքա՛ն վայելք կա այս կտավի կտորի վրա,— գոչեց Պորբյուսը:

Խորասուզված ծերունին չէր լսում նրանց ու ժպտում էր իր այդ երևակայական կնոջը:

— Բայց վաղ կամ ուշ նա կնկատի, որ իր կտավի վրա ոչինչ չկա,— գոչեց Պուսենը:

— Ոչինչ չկա իմ կտավի վրա՞,— ասաց Ֆրենհոֆերը նայելով մերթ նկարիչներին, մերթ կարծեցյալ նկարին:

— Այդ ի՜նչ արիք,— ընդոստ դիմեց Պորբյուսը Պուսենին:

Ծերունին ուժով բռնեց երիտասարդի բազուկն ու ասաց.

— Դու ոչինչ չես տեսնում, բռի, ավազակ, ոչնչությո՛ւն, լի՛ր բբ:— Ինչո՞ւ եկար այստեղ:— Իմ բարի՜ Պորբյուս,— շարունակեց նա դառնալով դեպի նկարիչը,— միթե դո՞ւք էլ եք ծիծաղում ինձ վրա. պատասխանեցե՛ք, ես ձեր բարեկամն եմ, ասե՛ք, հո չե՞մ փչացրել նկարս:

Պորբյուսը, տատանվելով, չհամարձակվեց որևէ բան ասել. բայց ծերունու սպիտակ դեմքի վրա դրոշմված անձկությունն այնքան դժնդակ էր, որ նա ցույց տալով նկարն՝ ասաց.

— Նայեցե՛ք:

Ֆրենհոֆերը մի բոպե զննեց իր նկարն ու երերաց.

— Ոչի՜նչ, ոչի՜նչ: Եվ տա՜սը տարի շարունակ աշխատելուց հետո:

Նա նստեց ու սկսեց լաց լինել:

— Ուրեմն մի տխմար ու խելագար մարդ եմ ես. ուրեմն ո՜չ տաղանդ ունեմ, ո՜չ ընդունակություն. ես այլևս լոկ մի հարուստ մարդ եմ, որն ավելորդ է աշխարհի վրա: Ուրեմն ես ոչինչ չեմ արտադրի:

Արցունքների միջից նա զննեց իր նկարը, հանկարծ հպարտությամբ վեր կացավ և մի փայլակնացայտ հայացք նետեց նկարիչների վրա:

— Երդվում եմ Քրիստոսի արյունով, մարմնով ու գլխով, որ դուք նախանձում եք և ուզում եք ինձ հավատացնել, թե նկարը փչացված է, որպեսզի գողանաք ինձնից: Իսկ ես տեսնում եմ նրան, գոռաց ծերունին,— նա սքանչելիորեն գեղեցիկ է:

Այդ բոպեին Պուսենը լսեց մի անկյունում մոռացված Ժիլլետի հեկեկանքը:

— Ի՞նչ է պատահել, հրեշտակս,— հարցրեց հանկարծ նորից սիրահար դարձած նկարիչը:

— Սպանի՛ր ինձ,— ասաց աղջիկը:— Ես անարգ կլինեի, եթե դարձյալ սիրեի քեզ, որովհետև արհամարհում եմ քեզ: Հիանում եմ քեզնով, բայց դու խորշանք ես ազդում ինձ: Ես քեզ սիրում եմ, և կարծես արդեն ատում եմ:

Այն միջոցին, երբ Պուսենը լսում էր Ժիլլետին, Ֆրենհոֆերը կանաչ սարժայով նորից ծածկում էր իր **Կատերինին** այն լուրջ հանդարտությամբ, որով գոհարավաճառն է փակում իր դարակները՝ կարծելով, թե շրջապատված է ճարպիկ գողերով: Նա խոր ծածկամտությամբ, արհամարհանքով ու կասկածով լի մի հայացք նետեց նկարիչների վրա և լռիկ ու ջղագրգիռ արագաշարժությամբ դուրս հանեց նրանց արվեստանոցի դռնից: Ապա տան շեմքի վրա ասաց նրանց.

— Մնա՜ք բարով, իմ սիրելի՜ բարեկամներ:

Այդ մնաք բարովը քարացրեց նկարիչներին: Հաջորդ առավոտ, Պորբյուսը, որ անհանգիստ էր, եկավ տեսնելու Ֆրենհոֆերին և իմացավ, որ նա մեռել էր այդ գիշերը՝ իր նկարներն այրելուց հետո:

ԱՆՀԱՅՏ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ

1867 թվականի փետրվարի 25-ի իր նամակում Կ. Մարքսը խորհուրդ է տալիս Էնգելսին կարդալ Բալզակի երկու վիպակները՝ «Անհայտ գլուխգործոցը» և «Հաշտված Մելմոթը», որոնք նա համարում է «Երկու փոքրիկ գլուխգործոցներ՝ լի զմայլելի իրոնիայով»:

«Անհայտ գլուխգործոցի» վրա Բալզակն աշխատել է 1830 թվականին: Այդ պատմվածքն առաջին անգամ լույս է տեսել 1831 թվականին «Արտիստ» հանդեսում. նա բաղկացած էր երկու մասից. «Վարպետ Ֆրենհոֆեր» և «Կատրին Լեսկո»: Հետագայում Բալզակը «Անհայտ գլուխգործոցը» մտցրեց իր «Փիլիսոփայական վեպեր ու պատմվածքներ» շարքի III հատորում: 1845 թվականին «Անհայտ գլուխգործոցը» վերահրատարակվում է «Մարդկային կատակերգություն» XV հատորում («Փիլիսոփայական էտյուդներ», I հատոր):

«Անհայտ գլուխգործոցի» գործողությունը տեղափոխված է XVII դարը, բայց հեղինակի կողմից դրված արվեստի պրոբլեմներն այժմեական էին նաև Բալզակի ժամանակաշրջանի, ռեալիզմի ձևավորման ժամանակաշրջանի համար: Անկասկած է, որ պատմվածքում իրենց արտացոլումն են գտել էսթետիկայի հարցերի վերաբերյալ վեճերը, որոնք 30-ական թվականների սկզբում բորբոքվեցին հատուկ սրությամբ: «Անհայտ գլուխգործոցում» արտահայտված են արվեստի էության և արվեստագետի խնդիրների վերաբերյալ Բալզակի մի քանի նվիրական մտքերն ու համոզմունքները:

Պատմվածքում բաց է արվում, թե ինչպե՛ս մղումը դեպի վարպետության բարձր իդեալը, ուղղված լինելով սխալ ճանապարհի վրա, վերածվում է ինքնաբավ կատարյալ ձևի որոնումների, դա կոնֆլիկտի մեջ է մտնում ստեղծագործության իսկական հնարավորությունների հետ և կործանարար է դառնում արվեստի գործի և նրա ստեղծողի համար:

Բալզակը ցույց է տալիս իրականությունից և նրա պահանջներից կտրվածության, «մաքուր արվեստում» պարփակվելու, միայն ձևի հետևից ընկնելու, արվեստագետի՝ իր ստեղծագործության ու խնդիրների գնահատման սուբյեկտիվիզմի վտանգը: Հենց դրանով «Անհայտ գլուխգործոցի» հեղինակը պայքար է մղում ռեալիզմի համար գեղարվեստական ստեղծագործության մեջ:

[1] **Պորբյուս** Ֆրանսուա Կրտսեր (1570—1620) — ֆլամանդական նկարիչ, որն ապրում ու աշխատում էր Փարիզում:

[2] **Մաբյուզե** — հոլանդական նկարիչ Յան Գոսարտը (XV դարի 70 թվականներից մինչև XVI դարի 30-ական թվականները), Մաբյուզե մականունը նա ստացել իր հայրենի քաղաքի անունով:

[3] **Նիկոլա Պուսեն** (1594—1665) — ֆրանսիական հռչակավոր նկարիչ: